

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

Ա. Ն. ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ

ՖԱՐԻԿԻԻ «ՆՓՐԿԵՐՏԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ» (ԺՐ ԴԱՐ)
ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Պատմական Հայաստանի Աղձնիք նահանգը, որը 7-րդ դարից արդեն մասամբ բնակեցված էր արաբներով, տվել է մի արաբ պատմիչ՝ ալ-Ֆարիկի, որի, հիմնականում անտիպ, աշխատությունը՝ «Նփրկերտի (Մայյաֆարիկին կամ Մուֆարդին) Պատմությունը», մեծ նշանակություն ունի Հայաստանի պատմության ուսումնասիրման համար:

Նփրկերտի պատմությունը հայտնի է երկու գրչագրերով, որոնք գտնվում են Լոնդոնի Բրիտանական թանգարանում և երկուսն էլ թերի ևն, չունենալով սկզբի և վերջի թերթերը: Դրանցից մեկը մեծ ձեռագիր (Օր. 5803), որը պարունակում է 200 թերթ, իսկ մյուսը՝ (Օր. 6310) փոքր է և ունի 138 թերթ, սակայն երկուսն էլ գրեթե նույն բնագիրն են ներկայացնում:

Այս ձեռագիր աշխատության վրա ուշադրություն է դարձրել անգլիացի արևելագետ Հ. Ֆ. Ամեդրոզը, որն այն նկարագրելուց հետո, նրա մի փոքրիկ հատվածը տպել է արաբ պատմիչ Դիբն ալ-Կալանիսիի «Դամասկոսի պատմության» վերջում որպես հավելված¹: Փոքր հատվածներ օգտագործել են Մ. Կանարը², Վ. Մինորսկին³ և Գ. Մերեթելին⁴: Բացի դրանից Բ. Ա. Լ. Առադը հրատարակեց Մովսես Կալանիսիի պատմությանը վերաբերող մի մեծ հատված⁵:

¹ History of Damascus by Ibn al-Qalanisi, ed. by H. F. Amedroz, Leyden, 1908, p. 360—365.

² Recueil des textes relatifs a Sayf al-Daulah, Alger, 1934.

³ Caucasia in the History of Mayyafariqn, BSOAS, 1949 p. 27—35.

⁴ „Арабская хрестоматия“, Тбилиси, 1949, стр. 68—75.

⁵ Tarikh al-Farqi, Cairo, 1959.

Ահմադ Իբն Յուսուֆ Իբն Ալի Իբն ալ-Ազրակ ալ-Ֆարիկին ծընվել է Հայաստանի Նփրկերտ (պատմական Տիգրանակերտ) քաղաքում և շրջել է բազմաթիվ արևելյան երկրներ: Ծղել է Բաղդադում, Մոսկովում, Դամասկոսում, Հալեպում, Մարդինում, Ամիդում, Խլաթում, Բերկրիում, Անիում, Վրաստանում ու Դերբենդում: Նփրկերտում պաշտոններ է վարել, իսկ Վրաստանում ծառայության է մտել Դեմետրե թագավորի մոտ: Ֆարիկին օգտագործել է բազմաթիվ արաբական սկզբնաղբյուրներ, որոնց մեջ բացի հայտնի մատենագիրներից՝ Բալազուրի, Իբն Խորդադրեհ և այլն պետք է հիշել նաև Շիմշաթիի (Հայաստանի Արշամաշատ քաղաքից) «Մոսկովի պատմությունը», որը դժբախտաբար դեռ հայտնաբերված չէ: Ֆարիկիի համար մեծ նշանակություն են ունեցել իր անձնական պրպտումներն ու դիտողությունները, քանի որ շատ բան անձամբ է ստուգել:

Ֆարիկիի 12-րդ դարի կեսերին վերաբերող տեղեկությունները Հայաստանի մասին հույժ հետաքրքրական են: Դա այն ժամանակաշրջանն էր, երբ Հայաստանում կատաղի պայքար էր գնում տարբեր ուժերի միջև: Հայկական իշխանություններից (Սասունի Թոռնիկյանները, Վասպուրականի Խեղենեկյան-Արծրունիները, Սյունյաց թագավորությունը, Արցախի իշխանությունը և այլն) ոչ մեկը ի վիճակի չէր երկիրն ազատագրել տեղում հաստատված օտար ուժերից, որոնք անպատիժ ասպատակում էին հայկական նահանգները: Խլաթի Շահ-Արմենները, Աղձնիքի Արտուխյանները, Կարսի ու Կաբինի ամիրանները, Անիի ու Դվինի Շադդադյանները իրար ձեռքից խլիխում էին հայկական քաղաքները: Այս թոհուրոհին եռանդուն կերպով մասնակցում էին Ատրպատականի Ելտկուզյանները և մահմեդական այլ տիրակալներ: Պայքարին մասնակցում էին նաև վրաց Բագրատունիները, որոնք օգնում էին Հյուսիսային Հայաստանի հայ իշխաններին ազատագրելու երկիրը:

Հյուսիսային Հայաստանը ամիրայությունների ձեռքից ետ խլելու սկիզբը գրվեց Դավիթ Բ շինարարի օրոք (1089—1125), որը 1118 թ. իր թագավորությանը միացրեց Տաշիր-Ձորագետը: 1121 թ. օգոստոս ամսին նա հաղթեց մահմեդականների միացյալ զորքին Մանգլիսի մոտ Դիդգոր կոչված լեռներում: Դրանից հետո 1122 թ. նա երկար պաշարումով կարողացավ գրավել Տփղիսը: Դեմետրե Ա (1125—1155/6) Բագրատունին շարունակեց պայքարը ամիրայությունների դեմ և 1139 թ. օգտվելով Գանձակի երկրաշարժից, հարձակվեց քաղաքի վրա ու մեծ թվով գերիներ վերցրեց

մահմեդականներից, Գեորգի Գ (1155/6—1184) թագավորը հայերի ապսամբության շնորհիվ 1161 թ. գրավեց Անին և քաղաքի կառավարիչ նշանակվեցին Սազուն Արծրունին և ապա Սարգիս իշխան Ջաքարյանը, իսկ 1162 թ. գրավեց Դվինը, Սակայն 1163-ին մահմեդականների (Ատրպատականի Ելտկուղ Աթաբեկի և այլոց) միացյալ զորքեր նախ գրավեց Դվինը, ապա Անին պաշարելուց հետո ընդհարվեց Գեորգիի հետ ու պարտության մատնեց նրան։ Այս հաղթանակից հետո Ատրպատականի զորքերը Հայաստանում աստիճանաբար նվաճեցին Սյունյաց թագավորությունը և Արցախի իշխանությունը, Ելտկուղի մահվանից հետո Գեորգին նորից հարձակման անցավ և 1174 թ. վերստին գրավեց Անին, Հյուսիսային Հայաստանի ազատագրումը իրագործեց հայկական զորքերի հրամանատար Ջաքարե Ամիրսպասալարը։

Ահա սրանք են ժամանակագրական շրջանակները Ֆարիկիի պատմության այն հատվածի, որի թարգմանությունը տալիս ենք ստորև։ Իհարկե նփրկերտի պատմության մեջ կան նաև այլ տվյալներ Հայաստանի պատմության մասին, մանավանդ, որ դրանում շարադրված է 9—12-րդ դդ. խալիֆայության և մանավանդ Աղձնիքի պատմությունը։ Ֆարիկիի Հայաստանին վերաբերող տեղեկությունների ամբողջական պատկերը հնարավոր կլինի ունենալ միայն այն ժամանակ, երբ լրիվ հրատարակվի նրա անտիպ աշխատությունը։

Ստորև տալիս ենք երեք հատվածի թարգմանություն, նախ Գ. Մերեթելու հրատարակած էջերից (Ա) և ապա Վ. Մինորսկու թարգմանությունից (Բ)։ Վերջապես Ամեդրոզի լույս ընծայած հատվածը (Գ), որն ավելի արժեքավոր է և հետաքրքրական։ Փակագծերի մեջ առնված հատվածը այլ հեղինակի է պատկանում։

Ա. «Հինգ հարյուր տասնհինգ (1121—1122) տարում Թաֆլիսի (Տփղիսի) ժողովուրդը¹ հրավիրեց նաչմ ալ-Դին Իլզազուն², որպեսզի Թաֆլիսը նրան հանձնի, իսկ նախապես քառասուն տարի նրա ժողովրդի ձեռքում էր գտնվում։ Երկու հարյուր տարի իշխում էր դրա ժողովրդից մի ընտանիք, որը կոչվում էր Բանու Ջաֆար³,

¹ Ժողովուրդ ասելով բոլոր դեպքերում նկատի ունի քաղաքի միայն մահմեդական աղդարնակությունը։

² Արտուխյանների մի ճյուղը իշխում էր Մարդինում 1106/1107 թվից սկսած և դրանցից էր նաչմ ալ-Դին Ալփի Իրն Տիմուրտաշը (1152/53—1179/80), տե՛ս E. de Zambaur, Manuel de généalogie et de chronologie, 1955. p. 228—229.

³ Ջաֆարյաններ, Տփղիսի ամիրաներ։

իսկ հետո քայքայվեց: Ապա նրա ժողովուրդը վերցրեց իշխանությունը և ամեն ամիս մեկն էր իշխում:

Վրաց (Քուրջ) և Աբխազաց թագավոր Դաուդը (Դավիթ) շատ նեղեց քաղաքը, իսկ [ժողովուրդը] լուր ուղարկեց սուլթան Թուգ-բիլին⁴, որը Ջանգիում (Գանձակ) ու Առանում էր: Սա օգնություն ուղարկեց, սակայն Վրաց թագավորի ձնշումը շարունակվում էր և համաձայնվեցին, որ ամեն տարի նրան կտան տասը հազար դինար ու կունենան միայն տասը հեծյալից բաղկացած մի ջոկատ: Այսպես մնաց որոշ ժամանակ:

Ապա հրավիրեցին Նաջմ ալ-Դինին և նրա հետ եկավ Սայֆ ալ-Դաուդա Դուքայս Իբն Սադակա ալ-Մազիազին⁵, որը Նաջմ ալ-Դինի փեսան էր՝ ամուսնացած նրա աղջկա՝ Քուհար (Գուհար) խաթունի հետ և այդ տարի էր նրա մոտ եկել: Նա զորքերի հետ գնաց, իսկ նրա հետ էր ալ-Կադի Ալամ ալ-Դին Իբն ալ-Ջաբարը, որի որդին՝ ալ-Կադի Արու-լ-Ֆատհը այժմ Մարդինի դատավորն է և վեզիր Աբու Տամամ Իբն Աբդուն: Նրանք հասան Արզան ալ-Թում, որտեղ Կադին ու վեզիրը ետ մնացին: Նա զորքով գնաց Կարս և Տարիալիսի (Թոեղք) ճանապարհով առաջ անցավ: Շատ զորք հավաքեց և եկավ սուլթան Թուգբիլը Ջանդիի (Գանձակ) կողմից. իսկ Ֆախր ալ-Դին Թուղան Արսլան ալ-Ահմադը՝ Դաուդին (Դվին) կողմից: Առաջ գնաց զորքը մինչև որ նրա ու թաֆլիսի լեռան միջև կես օրվա ճանապարհ մնաց: Դաուդ թագավորը դուրս եկավ արևմտյան կողմից և նրա որդին՝ Դիմիթրին՝ (Դեմետրե) լեռան կատարից հարձակվեց, իսկ նրանք (մահմեդականները) լեռան ստորոտում էին: Այդտեղ մեծ ճակատամարտ եղավ և մահմեդականները անհաշիվ սպանվեցին ու պարտվեցին: Մահմեդականներն ու արաբները անհաշիվ գերի ընկան և նրանցից մեծ ավար վերց-

⁴ Թուգբիլը Իրաքի սելջուկյաններից էր և իշխել է 1132—1133 թթ.: Այս դեպքերի ժամանակ Իրաքում իշխում էր նրա եղբայր Մուհամմադը (1118—1131):

⁵ Սայֆ ալ-Դաուդա Սադակա Իբն Դուքայսը, որը Սադակա Բ-ն է (1135—1137), Իրաքի մազիազիներից էր: Այս դեպքերի ժամանակ նրանց ամիրան էր Սադակայի հայրը՝ Նուր ալ-Դաուդա Դուքայսը (1108—1135): Стэнли Лэн-пуль, мусульманские династии, (В. Бартольд), СПб., 1819, стр. 97.

⁶ Ֆախր ալ-Դին Թուղան Արսլան ալ-Ահմադը Արզնում և Բաղեշում իշխող սելջուկյան ընտանիքից էր, որը խնամիական կապերի մեջ էր Արտուխյանների հետ: Նրանցից հայտնի էին Թուղան Արսլան Իբն ալ-Ահմադը, Հուսամ ալ-Դաուլան, Շամս ալ-Դին Յակուտ Արսլանը և վերջապես Ֆախր ալ-Դին Դաուդ Շահ Իբն Թուղանը (իշխել է 1148/49 թ.):

րին այնպես, որ մինչև այժմ էլ նրանց (վրացիների) մոտ գերիներ են մնում:

Ես տեսել եմ ռազմի գաշտը, երբ Թաֆլիս եմ մտել հինգ հարյուր քառասուն ութ (1153) տարում և Աբխազաց թագավոր Դիմիթրիի (Դեմետրե) ծառայության մեջ մտել: Մենք միասին ճանապարհորդել ենք նրա տիրույթներում յոթանասուն օրից մի քիչ ավելի: Ապա գնաց [թագավորը] Ալլանի (Ալանաց) և Դարբանդի կողմերը: Օրերից մի օր հասանք մի լայն մարգագետին, լեռան դիմաց, իսկ լեռան ստորոտում կար մի բարձր ամրոց: Թագավորը այնտեղ իջևանեց: Ասաց ինձ Աբխազաց թագավորը՝ ով այսինչ, այս ամրոցում մի օտարական կա, որը գերի է Իլդադիի մարդկանցից: Վաղը բարձրացիր նրա մոտ, նայիր և հարցրու, թե որտեղից է նա: Ես մտքումս մի որոշում առաւ [Սակայն] երբ գիշեր եղավ, թագավորին լուր հասավ, թե ինչ որ նահանգ ապստամբել է նրա դեմ: Անմիջապես երթի փողը հնչեց և թագավորը ճանապարհ ընկավ:

Ալլահը չկամեցավ, որ մենք հանդիպեինք իրար:

Երբ մահմեդականները պարտվեցին, Նաշմ ալ-Դինը Դուբայսի հետ քսան ձիավորով դուրս եկավ, գնաց իր երկիրը և ամբողջ կազմով վերադարձավ Մայլաֆարիկին (Նփրկերտ): [Մահմեդական] զորքերի պարտությունից հետո Աբխազաց թագավորը վերադարձավ ու պաշարեց Թաֆլիսը, ապա տրով գրավեց այն և մտավ հինգ հարյուր տասնհինգ տարվա վերջում (1122): Կողոպտեց, մեծ մասը վառեց, ապա երաշխիք տվեց, բնակչությանը լավ վերաբերվեց և պայմանագիր կնքեց ըստ նրանց ընտրած պայմանների: Պայման դրեց, որ մահմեդականների ապրած կողմը խոզ չտանեն կամ չմորթեն նրանց մեջ, դիրհեմ (արծաթ գրամ) կտրեց նրանց համար, որի վրա խալիֆայի ու սուլթանի անունները կային, իրավունք տվեց բացահայտ կերպով ազան (աղոթքի կոչ) ու աղոթք անելու, որոշեց, որ ոչ մի վրացի, հրեա կամ հայ չմտնի Իսմայիլի բաղնիքը, ուրբաթ օրը մզկիթի մինբարից (բեմից) հիշեն խալիֆային ու սուլթանին և ոչ թե իրեն: Նա պայման դրեց, որ վրացու ծառայությունը արժի տարեկան հինգ դինար (ոսկի դրամ), հրեայինը՝ չորս դինար, իսկ մահմեդականինը՝ երեք դինար, իսկ ով որ որևէ մահմեդականի նեղեր, ապա նրա արյունը պետք է թափվեր: Մահմեդականներին ծայր աստիճան բարյացակամ վերաբերվեց, իսկ կրոնավորներին, գիտուններին ու սուֆիներին այնպիսի հարգանք ու պատիվ ցույց տվեց, որպիսին նրանք չունեին մահմեդա-

կաննների մոտ: Ես տեսել եմ, թե ինչպես այս պայմանները մահ-
մեղականները վայելում են մինչև այն օրը, երբ մտա նրանց մոտ
Հինգ Հարյուր քառասուն ութ (1153) տարում:

Այդ տարում ես տեսա Դիմիթրի թագավորին, որը եկավ Թաֆ-
լիս (Տփղիս) և մի քանի օր մնաց: Ուրբաթ օրը նա գնաց մեծ
մզկիթ և նստեց մինբարի (բեմի) ու քարոզիչի դիմացի նստա-
րանը: Նա ունկնդրեց ամբողջ քարոզը ու սպասեց մինչև որ մար-
դիկ աղոթեցին ու դուրս եկավ: Այդ օրը մեծ մզկիթին նվիրաբերեց
երկու հարյուր կարմիր դինար: Ես տեսա, թե նա ինչքան բարյա-
ցական էր կրոնավորների, գիտունների, սուֆիների, քարոզիչների
և ազնվականների նկատմամբ, որոնք իրեն էին դիմում: Բարիք էր
անում նրանց, պատվում էր, պաշտպանում էր ու առատաձեռն
նվերներ տալիս:

Ասել են, որ Հինգհարյուր տասնվեցին (1122—1123) Զանգի
(Գանձակ) քաղաքում երկրաշարժ եղավ և նրա մի մասը շոքեց,
իսկ պարիսպները կործանվեցին: Եկավ Դաուդ թագավորը, կո-
ղոպտեց ժողովրդին, գերեց, շատերին գերեվարեց և կառքերի վրա
դրած ոչխարների նման տարավ: Ինչ որ կար կողոպտեց ու բերեց
Թաֆլիս: Ժողովուրդը դրանց մեծ մասին գնեց ու ազատ արձակեց»:

Բ.⁷ «Անիի տեր Ֆախր ալ-Դին Շադդադը մարդ ուղարկեց Ար-
վան Ալ-Ռումի տիրոջ Իզզ ալ-Դին Սալդուկի աղջկա ձեռքը խնդրե-
լու: Որոշ ժամանակ անց հայրը նրան ամուսնացրեց Արդանի տի-
րոջ հետ: Ապա Շադդադը լուր ուղարկեց Սալդուկին ասելով՝ իմ
իշխանությունը Անիում թուլացել է, ուստի եկ ու գնիր այն ինձա-
նից, ես չեմ կարող դիմադրել վրացիներին և չեմ կարող ետ պա-
հել նրանց: Ես քո ծառայության մեջ կմտնեմ և քեզ հպատակ կլի-
նեմ: Սակայն, երբ Սալդուկը հասավ, Շադդադը [նրա դեմ ոխ ունե-
նալով] լուր ուղարկեց Աբխազաց ու վրաց թագավոր Դիմիթրիին,
որն այդ ժամանակ Bazway լեռան մոտ էր Անիից մեկ օր կամ մի
քիչ ավելի հեռավորության վրա՝ տեղեկացնելով Սալդուկի գա-
լըստյան մասին: Եկավ Դիմիթրի վրաց զորքով և առավոտյան
Անիում էր: Հարձակվեց [Սալդուկի մարդկանց] վրա և մեծ թվով
սպանեց նրանց: Իզզ ալ-Դին Սալդուկը գերի բռնվեց շատ մարդ-
կանց հետ միասին և անհամար մահմեդականներ գերի ընկան: Սա
մի անմոռանալի [տխուր] օր էր մահմեդականների համար: Ապա

⁷ Այս հատվածը Մինորսկին ուղղակի թարգմանել է արաբերեն ձեռագրից՝
Studies, 86—88: Առաջին մասը վերաբերում է 543 (1154) թվականին:

Դիար Լաբրիայի ու Սիրիայի թագավորները ղեսպաններ ուղարկեցին Արխազաց թագավորին միջնորդութեան համար, և Իզդ ալ-Դինի համար փրկագին որոշվեց հարյուր հազար դինար (ոսկեդրամ)։ Նա արձակվեց ու վերադարձավ իր երկիրը։ Իվ մի հսկայական գումար ուղարկվեց նրա երկրից փրկելու այն գերիներին, որոնք Սալ-դուկի հետ բռնվել էին։

550 (1150) տարվա համար Ֆարիկին պատմում է.

«Քահանաները ապստամբեցին Անիում և այն գրավեցին Նախիւ ալ-Դին Շադդադ Իբն Մահմուդ Իբն Մինուջիհի ձեռքից ու քաղաքը հանձնվեց նրա եղբորը՝ Ֆադլունին։ Ամիր Շադդադը լողեց երկիրը ու գնաց Սիրիա՝ Ասադ ալ-Դին Շիրքուհի մոտ, որի հայրը՝ Շադին, այս տան հոյատակներից էր։ Սա մի հին տուն է այս կողմերում և հայտնի է որպես Իբն Աբի-լ-Ասավի Իբն Մինուջիհի տունը։ Ամբողջ Առանր Զանգիից (Գանձակից) մինչև Դրդ (Դվին) և հարակից մասերով նրանց էր պատկանում։ Նասր ալ-Դաուլա Իբն Մուսանը նրանց ընտանիքից [աղջկա] հետ էր ամուսնացել ինչպես հիշել ենք։ Ամիր Շադդադը որոշ ժամանակ մնաց Նուր ալ-Դինի ծառայության մեջ, ապա եկավ Մարդին և գնաց տեսնելու ալ-Մալիք Նաջմ ալ-Դին (Արտուխյանին), որը նրան քաղցր վերաբերվեց և տվեց ընծաներ ու կալվածներ, որոնց մեջ էր Հիսն ալ-Հադիդը (Երկաթաբերդ)՝ Միֆարկինի երկրում Սանասինայի (Սասունի) սահմանների վրա։ Որոշ ժամանակ մնալուց հետո Շադդադը վերադարձավ իր մորեղբոր տունը Սուրմարի քաղաքում և այնտեղ որոշ ժամանակ մնաց։ Ես նրան հանդիպել եմ Միֆարկինում, իսկ նախապես ես նրան հանդիպել էի իր իշխանության ժամանակ Անի քաղաքում, երբ ես թագավորի ծառայության մեջ էի Թաֆլիսում։ 548 (1153/1154) տարում նա ինձ բազմաթիվ նվերներ էր արկնում։

Գ. «556 (1160/1161) տարում Անա (Անի) քաղաքում քահանաներն ապստամբեցին նրա տիրոջ ամիր Ֆադլուն Իբն Մինուջիհի դեմ, որը պարտվեց ու գնաց Քարան»⁸ կոչված ամրոցը Սուրմարիի մոտ։ Քահանաներն Անան հանձնեցին Աբխազաց թագավոր Քարթուրին»⁹ (Գեորգի)։ Նրա զորքը եկավ տիրեց, մեծ հարստու-

⁸ Հայտնի չէ, թե ընդգրկում Բաբրան է, թե Քարան, որովհետև արաբերենում «կոչվել» բայից հետո հիշված անունից առաջ «րի» մասնիկն է ավելանում, որը սակայն երբեմն կարող է մոռացության տրվել։ Սակայն երկու ձևով էլ մեղ հայտնի տեղանուն չկա Սուրմալուի մոտ։

⁹ Բնագրում զբված է Քրթուր, որը տվյալ դեպքում կասկած չկա, որ Գեորգի պիտի լինի և հավանաբար գրչական աղավաղման արդյունք է։

թյուն կողոպտեց և գերեվարեց Շազգադի¹⁰ և Ֆադլունի ամբողջ տունը: Զումադա Ա ամսում (մայիս, 1161) Աբխազաց թագավորը այնտեղ կառավարիչ նշանակեց իր հաջիբ (սենեկապետ) Սազունին¹¹ և վերադարձավ Թաֆլիս:

Իսկ նույն տարվա ռաջաբ ամսում (հուլիս, 1161) հավաքվեցին բոլոր զորքերը ամեն կողմերից՝ շահ Արմանը¹², Իզզ ալ-Դին Սալ-դուկը¹³, Արզնի տեր Ֆախր ալ-Դին Դաուլատ շահը և Կարսի ու Սուրմարիի տերը և դիմեցին դեպի Արաս (Արաքս) գետը: Դուրս

¹⁰ Նվերկերտի պատմության հիշված դեպքերը վերաբերում են այն ժամանակաշրջանին, երբ Հայոց մայրաքաղաք Անիում տիրություն էին անում Շադդադյանները: Նրանցից առաջինը՝ Մանուկեն (մոտավորապես 1072—1118), որդին էր Բագրատունի իշխանուհու և ինքն էլ իր հերթին ամուսնացել էր Բագրատունու հետ: Նրա որդին և հաջորդը՝ Աբու-լ-Ասվար Բ (մոտավորապես 1118—1124) վատ վերաբերվեց Անիի հայերին: Անեցիք դիմեցին Դավիթ թագավորին (1089—1125), որը մտավ Անի և Մայր տաճարի վրա Աբու-լ-Ասվարի դրած մահիկի փոխարեն վերականգնեց նախկին խաչը: Շուտով Անին գրավեց Աբու-լ-Ասվարի որդին՝ Ֆադլուն Գ (մոտավորապես 1125—1130): Նրան հաջորդեցին եղբայրները՝ հուլիզներ և ապա Մահմուդը: Մահմուդի երեք որդիները իրար հետևից իշխեցին: Ֆախր ալ-Դին Շադդադը երկար լմնաց Անիում, քանզի ապստամբ հայերը նրա փոխարեն իշխան դարձրին եղբորը՝ Ֆադլունին (1155—1169/61): Ապա 1161 թ. հայերն ապստամբեցին, և քաղաքը գրավեց Գեորգի թագավորը: Դրանից հետո Անիում տիրում էր Մահմուդի երրորդ որդին՝ Շահանշահը: 1199 թ. Զաքարե ամիրսպասալարը Անին վերջնականապես ազատագրեց օտար տարրերի ձեռքից: V. Minorsky, *Studies in Caucasian History*, London, 1952, p. 79—106.

¹¹ Սազուն Արծրունին Մահմանաբերդի ու Կայենի տեր Արծրունիների տոհմից էր, որդին նշանավոր Ամիր Քուրդ իշխանի, որի բույրը՝ Սահակդուխտը, Զաքարե ամիրսպասալարի մայրն էր:

Ինչպես երևում է այս արաբերեն բնագրից, Սազուն անունը, որը դեռ չի մեկնված, արաբական Սաադ անվան ձևափոխումն է «ուն» վերջավորությամբ (سعدون), ինչպես, օրինակ, Ֆադլ-Ֆադլուն, այնպես էլ Սաադ-Սասուդուն (Սազուն):

¹² Խլաթում XII դարում իշխում էին Շահ Արմեն (Հայոց թագավոր) տիտղոսը կրող սելջուկյան ամիրաները: Դրանցից առաջինն էր Սուքմանը, որը 1100 թ. գրավեց Խլաթը և այնտեղ հաստատվեց: Այս բնագրում հիշվող Շահ Արմանը Սուքման Բ-ն է (1133/34—1183/84), որը հայկական աղբյուրներում Շահ Միրան է կոչվում:

¹³ Սելջուկյան արշավանքներից հետո կործանված Կարնո քաղաքը վերստին ծաղկեց ի հաշիվ Արծնի, որը կործանվեց սելջուկների կողմից և նրա բնակչությունն անցավ Կարնո քաղաք ու վերաշինեց այն: Կարնո քաղաքը (Թեոդուպոլիս) մահմեդականների կողմից վերանվանվեց Արզան ալ-Ռում կամ Արդրում: Քաղաքում հաստատվեցին Սալդուխյան կոչված ամիրաները (1102—1236), որոնցից առաջինը Ալին էր, իսկ սրա որդին՝ Իզզ ալ-Դին Սալդուխը (1153/54—1164/65):

եկավ նաև ամիր Նաջմ ալ-Դին Ալփի Իբն Տիմուրտաշը նրանց միանալու: Այդ ասրվա շաաբան ամսում (օգոստոս, 1161) իջան Անիի մոտ և պաշարեցին այն: Նրանց դեմ դուրս եկավ Աբխազաց թագավոր Քարթուրը (Գեորգի) և չարդեց նրանց Անայի (Անիի) դարբասի մոտ: Երբ զորքն ու թագավորը հասան, Սալդուկ ամիրան նահանջեց և անջատվեց մահմեդականներից, քանզի ինչպես հիշել ենք, երբ Աբխազաց թագավոր Դիմիթրիոն նրան գերել ու ազատ էր արձակել, երգվեցրել էր, որ քանի կենդանի էր, նրա կամ նրա որդիների դեմ սուր չբարձրացնի և նրանց դեմ զորք չուղարկի: Վերցրեց Սալդուկն իր ձին, և երբ հեռացավ ամիր Սալդուկը՝ մահմեդական զորքը պարտվեց ու կոտորվեց և մեծ թվով մարդիկ սպանվեցին: Պարտվեց շահ Արմանը Անայի դարբասի մոտ, իսկ Արզնի տերը իր ձիով փախավ: Մահմեդականները անհամար գերիներ տվեցին: Կողոպտվեց շահ Արմանի ուղտերի երամակը¹⁴ և նրա բարեկամների մեծ մասն սպանվեց. փրկվողներից էր Մասուդը: Ինը հազար ձիավոր ու հետիոտն մահմեդականներ Սուլթանի տան մեծամեծներից և ուրիշներ գերի բռնվեցին: Գերի ընկավ նաև Բադր ալ-Դինը իլաթի տիրուհի՝ իսթոնի եղբայրը մոր կողմից և նրա հետ անհամար ժողովուրդ:

Պարտության լուրը հասավ ամիր Նաջմ ալ-Դինին, որը հասել էր Մանաղկերտի գավառը և վերադարձավ Մայյաֆարիկին (Ներփըրկերտ) առանց միանալու շահ Արմանին կամ ճակատամարտին մասնակցելու: Մոսուլի վեզիր Ջամալ ալ-Դինը սուրհանդակ ուղարկեց Աբխազաց թագավորին բարեխոսելու Իսբաքիրդի¹⁵ տիրոջ ամիր Հալդրի ալ-Կըրկթուղիի համար, որը շահ Արմանի մերձավորներից էր և ճակատամարտում գերի էր ընկել: [Թագավորը] ազատ արձակեց նրան: [Վեզիրը] ուղարկեց նաև հազար դինար, որով գնեց այնպիսի մահմեդականների, որոնք ոչ ոք չունեին՝ ոչ ընտանիք՝ ոչ էլ դրամ: Այսպիսով, գնեց հիշադցիների մի խումբ, որոնք այդ ճակատամարտում գերվել էին:

¹⁴ Բնագրում գրված է 𐌌𐌔𐌕 (բարք), այսինքն՝ ուղտերի երամակ, բայց Վ. Մինորսկին այստեղ կարգում է թուրքերեն 𐌌𐌔𐌕 (յաղաք) բառը, որը նշանակում է առաջապահ զորք, տե՛ս Minorsky, Studies, p. 91 (ժանր. 1).

¹⁵ Հայտնի չէ, թե այս Իսբաքիրդը (Ասպակե՞րտ) որտեղ է: Նրա վերջավորությունը անկասկած հայկական «կերտ» արմատն է: Վ. Մինորսկին այն նույնացնում է Բոհդան գետի հյուսիսում գտնվող Իսպայիրդի հետ, տե՛ս Minorsky, Studies, p. 91 (ժանր. 3).

557 տարվա շաբաթան ամսում (հուլիս-օգոստոս, 1162) վրացիք արշավեցին Դվին քաղաքը, մտան և ամեն ինչ կողոպտեցին: Մեծ թվով կոտորեցին և մահմեդականներից անհամար գերեվարեցին: Քանդեցին այն աշտարակը, որը սարքել էր Կուրտի Իբն ալ-Ահաբը վրացիների գանգերից¹⁶, նրանց կովում հաղթելուց հետո: Նրանք կործանեցին մզկիթները և տների մեծ մասը ու վերադարձան Քաֆլիս (Տիգրիս): Միառժամանակ մնալուց հետո դուրս եկան ու շարժվեցին դեպի Զանգի (Գանձակ) քաղաքը, կողոպտեցին, ժողովրդին գերեվարեցին, ապա վերադարձան Քաֆլիս բեռնակառքերի վրա դնելով գերիներին և անսահման կողոպուտ տարան:

558 տարվա շաբաթան ամսի 9-ին (13 հուլիս, 1163) շորեքշաբթի օրը շահ Արմանը, սուլթան Արսլան շահ Իբն Թուղրիլ¹⁷ բեկը, Շամս ալ-Դին Իլդիգուզը¹⁸ և Արզնի տեր Ֆախր ալ-Դինը մեծ ջարդ տվեցին Աբխազաց ու Վրաց թագավորին և մտան Քարքարի¹⁹ ամրոցը, որտեղ ճակատամարտ տեղի ունեցավ և [վրացի] խիստ պարտություն կրեցին: Նրանցից այնքան կողոպուտ վերցվեց, որ ոչ կարելի է նկարագրել, ոչ էլ հաշվել: Ավարի տրվեց թագավորի ախոռը, որի մսուրները արծաթից էին, վերցվեց թագավորի գինարուքի սենյակը իր մեջ եղածներով, որոնց մեջ կային արծաթե կարասներ: Կարասներից մեկը տարվեց սուլթանի մոտ: Կարասը և նրան ընկերակցողին մի կառք [հաղիվ] էր տանում: Սուլթանը [պալատ] ուղարկեց այն և ավարից երկու հազար դինար ուղարկեց ծախսերի համար: Իսկ ոսկե ու արծաթե գինու թասները բոլորն ուղարկեց Համադանի մզկիթը, որպեսզի մարդիկ դրանցով ջուր խմեն: Մի ուրիշ կարաս վերցրին թուրքմենները և կտոր-կտոր

¹⁶ Բազեշի և Արզնի տեր Կուրթ Իբն ալ-Ահաբը Շաղադյանների ձեռքից յսկեց Դվինը 1130 թ. և իշխեց մինչև 1162 թ.: 1131 թ. հաղթելով Դվինի վրա հարձակվող Աբուլեթի որդի Իվանե Օրբելիին, բարբարոսաբար կտրել տվեց սպանված զինվորների գլուխները և գանգերը դարսել տվեց Դվինի մինարների կտուրի վրա (Մեծին Վարդանյա Բարձրբերդցույ Վաստութիւն տիեզերական», Մոսկվա, 1861, էջ 161):

¹⁷ Արսլան Շահ Իբն Թուղրիլը Իրաքի սելջուկյաններից է և իշխել է 1160/61—1177/78 թթ.:

¹⁸ Ելտկուլյանների Ատրպատականի ամիրայության (1136—1225) հիմնադիր Ելտկուզը (1136—1172) Իրաքի սուլթան Մասուդի ստրուկն էր, հետո ամուսնանալով նրա ալրու հետ, դարձավ Ատրպատականի տերը:

¹⁹ Հավանական է, որ այս Քարքարին լինի Գյառզյառը (ռուս. (այժմ Սոփիանավանի շրջանում): Studies, 93, ծանոթ. 1.

արևցին: Մեծ կողոպուտ վերցրին ու շատ ժողովուրդ կոտորեցին: Արխաղաց թագավորը փախավ մի ընդարձակ սոճու անտառ, ուր երեք օրվա հեռավորության վրա արևի լույսը մարդ հաղիվ է տեսնում: [Ապաղա] ճակատամարտի վայրը այդ անտառում ես տեսել եմ, երբ 549 (1154) տարում Աբխաղաց թագավորի ծառայության մեջ էի գտնվում:

Շահ Արմանը վերցրեց երեք բեռ, որոնցից առաջինի մեջ կային ոսկե ու արծաթե ամաններ, երկրորդի մեջ թագավորի մատուռն էր, որտեղ կային տարբեր տեսակի զոհարներով ընդելուզված ոսկե ու արծաթե խաչեր, ինչպես նաև ոսկով նկարազարդված ավետարաններ, զոհարներով ընդելուզված, որոնց արժեքը ոչ ոք չգիտեր և նմանը ոչ մի տեղ չկար: Երրորդ բեռան մեջ կար թագավորի գանձարանը, ոսկով, արծաթով ու զոհարեղեններով, որոնք շատության պատճառով հնարավոր չէր գնահատել: Նույնիսկ ասվում է, որ հլաթի Դիվանի գրագիրները, երբ գրանցել են շահ Արմանի բաժինը, գտել են, որ դա երեսուն անգամ ավելի էր, քան այն, որը Անիի դարպասների մոտ նրանից խլել էին պարտության ժամանակ: Այս բանը լսեցի հլաթի շատ մարդկանցից, որոնք ճակատամարտին մասնակցել էին, իսկ ես այդ ժամանակ Բաղլիսում (Բաղն) էի: Երբ ավետարները հլաթ հասավ, ես հլաթում էի, որտեղ փախստականների մի խումբ կար: Սա մի մեծ օր էր, այնպես որ երկու օրում երեք հարյուր գլուխ տավար մորթվեց և միսը բաժանվեց աղքատներին ու խեղճերին: Մի քանի օր հետո շահ Արմանը հլաթ հասավ և այնտեղ ցուցադրեցին նմանը շտեմնված հարստություն ու զարդեղեն: Բաղլիսի տերը նույնպես տեղ հասավ և նրա գալստյան առթիվ քաղաքը զարդարվեց ռամադան ամսի մեկին (3 օգոստոս, 1163), երբ ես Բաղլիսում էի:

[«Պատմության սերուցքը»²⁰ (Զուբդատ ալ-Տաուարիխ) գրքի հեղինակը այդ ճակատամարտի մասին պատմում է, որ «...Աթաբեկ Դլդիգուզը, երբ հասավ Ատրպատական, վրացիք գրեցին նրան և ասացին, որ Քանջան (Գանձակ) ու Բայլականը տարեկան հարկ են վճարում մեր թագավորի գանձարանին, որը երկու տարուց ի վեր

²⁰ Այս հատվածը (Akhbār ad-daulat al-Saljuqiya ed-M. Iqbal. pp. 157—172), որ փակագծերի մեջ ենք նշել, քաղված է սելջուկյան ժամանակաշրջանի այլ հեղինակից, Ամեդրուզը Ֆարեկի բնադրի հետ է հրատարակել այն: Նկատի ունենալով, որ հատվածը հեռաբեկական է, թարգմանել ենք Ֆարեկի խոսքերի հետ: Միայն պետք է նշել, որ այստեղ հիշված 566 (1170/71) թվականը ճիշտ չէ: Պետք է լինի՝ 558:

չի վճարվել: [Ուստի] պահանջում ենք քեզանից, որ դու վճարես այն: Նա նրանց պատասխանեց՝ ես իրաքից եկել եմ այս երկիրը հենց զորքեր հավաքելու, Թաֆլիսի դեմ գնալու և այն պաշարելու նպատակով ու չեմ հեռանա մինչև որ գրավեմ այն: Ինչ ուժ որ ունեք՝ ի հայտ բերեցեք, ահա գալիս եմ ձեր երկիրը այնպիսի զորքով, որից ձեզ կարող է փրկել սրերի բախումը և նիզակների հարվածները:

Սուլթան Արսլան շահ Իբն Թուղրիլը Համադանում էր, իսկ իրաքի զորքերի վիճակը ավելի բարեկարգ էր, քան սուլթան Մասուդի օրոք: Աթաբեկ Իլդիզուդը լուր ուղարկեց նրան և տեղեկացրեց վրաց նամակի մասին և որ ինքը այսպես-այսպես է պատասխանել, բացատրելով նրան նամակն ու պատասխանը և նրան մատուցելով այն: Վեր կացավ սուլթան Արսլան շահ Իբն Թուղրիլը իրաքից այնպիսի զորքով, որը [մարդկանց] աչքերն էր շլացնում, իսկ սրտերը ահ էր գցում: Այնպիսի մարդիկ էին, որոնցից մեկը հազար և յուրաքանչյուրը բազմապատիկ արժեք: Պատերազմներն էին նրանց դաստիարակել մատակ ձիերի վրա և զանազան փորձանքներն էին նրանց կոփել: Իրաքում չկար մի զորք, որի մեջ հավաքված լինեին զինվորների այնպիսի խմբեր, ինչպիսիք հավաքել էր այս զորքը: Շարժվեց [զորքը], գնաց մինչև որ հասավ Աթաբեկ Իլդիզուդին նախշաուանում և ապա նախշաուանից գնաց մինչև որ հասավ Քանջա (Գանձակ) և այնտեղ մնաց մի քանի օր: Երբ վրաց թագավորը լսեց նրա գալստյան մասին և որ նա որոշել է հանդիպել ու կռվել նրա հետ, սուրհանդակ ուղարկեց և աղերսեց [ասելով], որ ես հրաժարվել եմ իմ պահանջից և այլևս քեզ վնասող արարք չեմ գործի և կզիջեմ ինչ որ կամենաս ու կկատարեմ քո բոլոր ցանկությունները:

Բազմամարդ զորքով ու բավարար պատրաստությամբ սուլթանի ճամբարն էր եկել նաև շահ Արման Սուլման Իբն Իբրահիմը՝ նրա ծառայության մեջ մտնելու և նրա գորգը համբուրելու: Հենց որ հասավ, խոնարհաբար դիմեց սուլթանին, մեծարանքով ու պատվով, հեզությամբ ու հարգանքով, իսկ սուլթանը նրան դիմում էր [ասելով]՝ եղբայրս²¹:

Երբ վրաց սուրհանդակը հասավ Աթաբեկ Իլդիզուդին, այս բանն առաջարկվեց սուլթան Արսլան շահ Իբն Թուղրիլին, որը հա-

²¹ Բնագրում գրված է *خبري*, որն ըստ վ. Մինորսկու, թուրքերեն նշանակում է *մեծ եղբայր*. Minorsky, Studies, p. 95.

վաքեց բոլոր ամիրաններին, ինչպես նաև շահ Արմանին: Նրանց հետ ներկա եղավ նաև Աթաբեկ Իլդիզուզը և նրանք խորհրդակցեցին Վրաց թագավորի սուրհանդակին տրվելիք պատասխանի մասին: Բոլորը դիմեցին Աթաբեկ Իլդիզուզին [ասելով]՝ քո կարծիքն է վճռականը, դու ավելի լավ գիտես քո երկիրը, ինչ ես մտածում: Նրանց թվաց, թե նա հակված է համաձայնություն: Վեր կացան ամիրանները և խոնարհաբար ասացին սուլթանին՝ մենք դրամ ենք վատնել մեր զինվորների և մարդկանց վրա և այնպիսի զորք ենք հավաքել, որին օդը նեղ է գալիս և նրա ուժից ու գրոհից թեքվում է գիշերը, և մինչդեռ այստեղ գալուց հետո, ահա վերադառնում ենք առանց հանդիպելու իսլամի թշնամուն, առանց մեր ուժը ցույց տալու և վրեժը լուծելու, հաբվածելու նրան, որպեսզի նվաստանա ու խեղճանա և առանց ճգմելու նրան, որպեսզի հրաժարվի իր ազահուլթյան մոլուկունից և փշրելու նրան, որպեսզի ահն ու սարսափը նրա սիրտը մտնի:

Այս կարծիքին համաձայնվեց շահ Արմանը և ասաց՝ իսլամի թշնամու կարողությունը սատիկ է և նրա ձնշումը ծանր է մահմեդականների վրա: Դեռ երեկ նա արշավեց Դվինի վրա, կողոպտեց և գերեվարեց նրա ժողովրդին: Նա տեսնում է, թե ինչպես հավաքվել ենք նրա հետ հանդիպելու և պատրաստվել ենք ետ մղելու նրա շարիքներն ու շարագործությունները: Երբ տեսնի, որ այսքան միջոցներ ծախսելուց ու զորք հավաքելուց հետո ցրվում ենք առանց հատուցում և հակահարված տալու նրան և վերադառնում ենք առանց բախվելու նրա հետ ու դիմադարձ լինելու, այդ ժամանակ կավելանա նրա ցանկությունը [հարձակվելու] և հենց որ սուլթանը, (Ալլահը հավերժացնի նրա թագավորությունը), վերադառնա Իրաք, ապա նա (թշնամին) իր մարդկանցով կմտնի իսլամի երկիրը, կտրորի այն իր զորքով և ոչ ոք չի լինի նրան դիմադրող, դատարկ կլինի [երկիրը] նրանցից, ովքեր կհանդիպեն նրան ու կդիմադրեն, և նա իր թույնը կթափի մահմեդական ժողովրդի վրա և իր շարիքը կսփռի մասնավորի ու ընդհանուրի վրա:

Երբ Աթաբեկ Իլդիզուզը լսեց այս խոսքերը և տեսավ, որ բոլորն էլ որոշել են հանդիպել [թշնամուն] դիմեց ամեն մի ամիրայի և փաթաթվեց ու համբուրեց նրա դեմքը, ասելով՝ այժմ իմացա, որ դուք նպատակադրված եք սրբազան պայքարի և որոշել եք կռվել Ալլահի թշնամիների դեմ: Պատրաստվեցեք անհավատներին դիմավորելու և ձեր անձերը զոհելու սրբազան պայքարում հանուն ամենահաղթ միակ [Ալլահի]: Նրանք ետ ուղարկեցին Վրաց

թագավորի սուրհանդակին մեղմ խոսքերով, և իրենց հավարույթը ցրվեց: Իսկ սուլթանի մոտ հավաքվել էին անթիվ անհամար թուրքմեններ և դիմեցին Վրաց երկիրը:

Երբ Վրաց թագավորը լսեց, որ իր երկիրն են դիմում, պատրաստվեց հանդիպման, հավաքեց իր բոլոր ուժերը և դուրս եկավ հսկայական զորքով ու բռններով, այնպես, որ անհավատների ոչ մի զորք չէր ունեցել այն, ինչ որ նրա զորքն ուներ՝ սարք ու հանդերձանք, ռազմի ու քանդման գործիքներ, վարժեցրած ձիեր ու գերազանց ջորիներ:

Իրար մոտեցան երկու խմբերը: Աթաբեկ Իլդիգուլը զորքերը երեք մասի էր բաժանել. մի խումբը պատրաստվեց հանդիպելու թագավորին ու նրա զորքին, մյուս խմբին, որի մեջ կար Իրաքի զորքը, նա հրամայեց սպասել մինչև որ ձին ձիուն խառնվի և մարդը մարդուն և սկսեն իրար հարվածել ու խոցոտել, որից հետո նրանք պետք է հայտնվեն մահմեդականներին սիրտ տալու և հեթանոսներին վախ ազդելու համար: Երրորդ խմբի մեջ կանգնեցրեց իր ծառաների ու մերձավորների հետ այնպիսի մարդկանց, որոնք պատերազմի փորձ ունեին և հաճախ էին մասնակցել ու ճանաչել նրա բոլոր փորձությունները՝ լինեն թաքուն, թե հայտնի:

Հասավ թագավորը. և դասավորեց իր զորքը՝ աջ, ձախ, սիրտ և երկու թև, իսկ մահմեդական զորքը նրանց դիմաց էր կանգնած: Վրացիք հարձակումներ գործեցին մահմեդականների վրա և ուժեղ բախվեցին նրանց: Կռիվը բորբոքվեց նրանց միջև, կտրում էին փայլատակող սրերով և անխնա թռցնում էին գլուխները: Երբ սաստկացավ կռիվն ու աղաղակը, գառնության բաժակը լցվեց և վրացիք կուտակվեցին մահմեդականների վրա, մահմեդականների երկրորդ խումբը նրանց դեմ դուրս եկավ ու վախեցրեց: Դրանք Իրաքի ամիրաներն էին, որոնց ձիերի գրոհից կարծես գիշերվա խավարն էր տիրում և հեղեղ էր թափվում: Փառաբանելով [Ալլահին], գոտեպնդված հաստատակամությամբ ու արագորեն միացան իրենց մահմեդական եղբայրներին և առաջ շարժվեցին Ալլահի թշնամիների դեմ, փշրելով նրանց զորքերը, հաղթելով նրանց հերոսներին և հտ մղելով նրանց իրենց դիրքերից: Այնուամենայնիվ սրանք հաստատ էին իրենց թագավորի հետ մինչև որ կեսօր դարձավ: Եվ ահա ժամանեց անձամբ Աթաբեկ Իլդիգուլը իր թուրք մարդկանցով ու կորյուններով, որոնք անհամար թափվում էին սևաթույր գիշերվա նման:

Երբ թագավորը տեսավ զորքերի ու զինամթերքի առատու-

Բյուզնը և Բե ինչպես խուռներամ իրար էին հաջորդում՝ թուլացավ և [ներանք] դիմացից ու թիկունքից շրջապատեցին սրերով, Ալլահի հավատացյալ մահմեդականները կուտակվեցին անհավատների հեթանոս ամբոխի վրա, նրան ստիպելով աղաղակներ արձակել, պար գալ ու փախչել։ Օրը հազիվ էր կիսվել և նրա հետ մահմեդականները կիսեցին Ալլահի պարտված թշնամիներին և նրանց հերոսներից ու քաջերից մոտավորապես տասը հազար հոգու սրախողիտով արեցին ու սփռեցին բաց դաշտում, որպես կեր երկրի գազաններին և երկնքի թռչուններին։ Անհավատների մեծամեծների ու հասարակ մարդկանց մի խումբ շրջապատվեց ու ստորացած, անարգանքով ու գերված քարշ տրվեց սուլթանի և Աթաբեկ Իլդիգունզի առջև, ինչպես տարվում են ոճրագործները խարույկի մոտ։ Նրանց դեմքերին անհավատության փոշին կար, ամոթով պարուրված, որոնց ձեռքերը բռնի մեջքին էին կապել։ Կամ երեսնիվայր քարշ էին տալիս, իսկ ոմանց էլ խոյերով²² երակին էին խփել։

Վրաց թագավորը հազիվ փրկեց իր հոգին և ավարի փոխարեն փախուստի համակերպվեց ու հաղթանակի փոխարեն՝ պարտության։ Մահմեդականները այնպիսի կողոպուտի տիրացան, որի նմանը ոչ մի մահմեդական [ռազմիկ] կամ մահմեդական զորք ձեռք չէր բերել։ Նրանց ձեռքերը լցվեցին կողոպուտով՝ ազատ արածող ձիեր, մեծ հարստություն, լավորակ գեղեցիկ վրաններ և պատանի տղաներ, որոնք նման էին թաքուն մարգարիտի։ Թագավորի մոտ գտնված իրերի մեջ էին խոշոր կաթսաները, որոնց միջից խմում էին նրանց ձիերը, ամբողջովին արծաթե, ինչպես նաև ամաններ, որոնց մեջ թագավորին ճաշ էին մատուցում, սեղաններ, ամաններ, ափսեներ, կաթսաներ, թասեր՝ բոլորը ոսկուց։ Նրա գանձարանում գտան գոհարներ, զուտ ոսկի, մարգարիտ ու բուստ (մարջան), ինչպես այն հիշել է բարձրյալ Ալլահը Ղուրանում և խոստացել դրախտի բնակիչներին։

Այս պատերազմը 566 (1170—1171) տարում էր։ Զորքերը մի քանի օրից հետո Վրաց երկիրը մտան և ասպատակ սփռեցին, կողոպտեցին, սպանեցին, ավերեցին և այն թողեցին ամալի վիճակում, կարծես երեկ բարգավաճ չէր եղել։ Նրանք հեռացան, երբ արդեն այնքան ավար ունեին, որ նրանց վիճակը բարելավվեց, և նրանց երազներն իրականացան։

²² Խոյը պատերազմական հատուկ գործիք է, որով պարիսպներին էին հարվածում միջնադարում (արար. դաբր)։

Սուլթանն ու Աթաբեկ Իլդիգուլը վերադարձան Քանջա (Գանձակ), իսկ շահ Արմանը հեռացավ իր իշխանության նստավայրը: Աթաբեկ Իլդիգուլը Գանձակում մի կառավարիչ նշանակեց, որպեսզի պահպանի այն և պաշտպանի թշնամուց, որը գուցե ասպատակեր նրա շրջակայքն ու երկիրը: Ապա գնաց և հասավ Նախաշառան ու այնտեղ որոշ ժամանակ սուլթանի ծառայության մեջ մնալուց հետո նրանք գնացին Համադան և ողջ-առողջ հասան իրենց ավարով առանց որևէ վնաս կրելու և իրենց բոլոր ցանկալի երազներն իրականացած:

Իսկ թե ինչ էր պատահել Անի քաղաքում, ահա թե ինչ է ասում ալ-Ֆարիկին իր «Պատմության» մեջ:

«559 թ. ջումադա Ա ամսին (ապրիլ, 1164) վրացիք մտան Անի քաղաքը, ապա հեռացան: Եկավ Շամս ալ-Դին Իլդիգուլը տիրեց և այնտեղ մնաց մի քանի օր: [Անի] վերադարձան այնտեղից հեռացածներից ոմանք և սկսեցին վերակառուցել այն: Իսկ Շամս ալ-Դին Իլդիգուլը գնաց Ջանդի (Գանձակ) քաղաքը և որոշեց հանդիպել վրացիներին:

Այդ տարում Սուրմարիի տեր ամիր Իբրահիմը վրացիների հետ ուժեղ բախում ունեցավ և մեծ թվով կոտորեց ու մեծամեծներին գերեց:

Տարվա վերջում Շամս ալ-Դին Իլդիգուլը Անին հանձնեց ամիր Շահանշահին, Շադդադ և Ֆադլուն ամիրանների եղբորը, որոնք Մինուչիհրի (Մանուչի) որդիներն էին և նրա (Անիի) տերերը:

(Ասել է նաև 563 թ. դեպքերի մեջ) այդ տարվա ռաջա ամսի սկզբին (1168 ապրիլի կեսերին) լուր հասավ, թե Արդան ալ-Ռումի տեր Իզդ ալ-Դին Սալգուկը մահացել է և նրան հաջորդել է որդին՝ ալ-Մալիք Մուհամմադը: (Ասել է նաև), որ 570 թ. ռաբի Ա ամսին (հոկտեմբեր, 1174) վրացիք դիմեցին Անի, օրերով պաշարեցին և գրավեցին Շադդադի եղբոր ամիր Շահանշահի ձեռքից: Կողոպտեցին, ավարի տվեցին ամեն ինչ, որ այնտեղ կար և իրենց կողմից այնտեղ նշանակեցին մի կառավարչի, և [քաղաքը] վրաց տիրութենների մեջ մտավ:

(Ասել է նաև) նույն տարում լուր ստացվեց, որ Աթաբեկ Իլդիգուլը գնաց վրացիների դեմ և մեծ ճակատամարտ տեղի ունեցավ: Մահմեդականները պարտվեցին, շատերը կոտորվեցին, իսկ ուրիշներ գերի ընկան և մահմեդականներից մեծ կողոպուտ վերցվեց: Աթաբեկը որոշ ժամանակ մնաց, ապա մեծաթիվ զորք հա-

վաքեց և զնաց նրանց դեմ: Նրանք հանդիպեցին Դվինի²³ դաշտում, սակայն ոչ իրար խառնվեցին և ոչ էլ կռիվ տեղի ունեցավ: Վրացիք վերադարձան առանց որևէ բան ձեռք բերելու, իսկ Աթաբեկ Իլդիգուզը մտավ Նախջառուան քաղաքը, զորք հավաքեց և լուր ուղարկեց Խլաթի տիրոջը և մի խումբ այլ ամիրաների, որպեսզի հավաքվեն իր մոտ՝ վրացիների հետ բախվելու և Ալլահի օգնությամբ նրանց շարագործությունները վերացնելու համար:

(Ասել է նաև) մուհարրամ ամսին 571 թվականին (օգոստոս, 1175) Աթաբեկ Իլդիգուզը, սուլթան Արսլան շահը և Խլաթի տեր շահ Արմանը, Դիարբաքրի զորքերը և Իլդիգուզի որդին՝ Փահլևանը, որի հետ կային Ատրպատականի և Համադանի անթիվ զորքեր, դիմեցին Վրաց երկիրը: Հատան Լուտի ու Դումանիսի դաշտի մերձակայքը, ապա դուրս եկան Ակ Շահիր, որը ընկած է Ախալքալաքի և Տարյալիսի (Թոնդը) դաշտի միջև: Նրանք կողոպտեցին այդ նահանգը, ավերեցին շենքերը, գերեվարեցին ում որ գտան, ոչնչացրին ցանքատարածությունները, այնպես, որ ոչ մի շենություն չմնաց այդ կողմերում: Թագավորը նստեց անտառում իր նստավայրում: Նրան հասնելու ոչ մի ճանապարհ չկար և ոչ էլ նա կարող էր դուրս գալ նրանց դեմ: Մի քանի օր մնալուց հետո՝ բոլորը վերադարձան.... սուլթանը՝ Դվին, իսկ շահ Արմանը և իր զորքը՝ Դիարբաքր ու Խլաթ: Նրանք հասան ուաբի Ա ամսի առաջին տասնամյակում (սեպտեմբեր, 1175) և մտնելով Խլաթ՝ քաղաքը զարդարեցին: Սա մի հիշատակելի օր էր: Խլաթի ժողովուրդը այնքան փող ծախսեց ու զարդարանքներ ցույց տվեց, որի նմանը չէր տեսնվել այլ երկրում, և զարդարանքները երեք օր մնացին Խլաթում:

А. Н. ТЕР-ГЕВОНДЯН

«ИСТОРИЯ МАЙЙАФАРИКИНА» ФАРИКИ (XII В.) О СОБЫТИЯХ В СЕВЕРНОЙ АРМЕНИИ

Р е з ю м е

«История Маййафарикина» — сочинение автора XII в. Ибн аль-Азрака аль-Фарики, родившегося в Маййафарикине

²³ Բնագրում գրված է ٥٧١ (առկն), որը պետք է վերականգնել ٥٧٥ (Դառկն), այսինքն՝ Դվին:

(в армянской области Алдзник) до сих пор не издана. Она находится в двух рукописях Британского музея и только небольшие отрывки изданы и изучены сперва Х. Ф. Амедрозом, а затем М. Канаром, В. Минорским, Г. Церетели и, наконец, Б. А. Л. Авадом.

Фарики лично побывал в разных областях Армении и Грузии. Он очевидец и современник многих событий, описываемых в его сочинении. Особый интерес представляют его сведения о событиях в Северной Армении во второй половине XII в. и войнах между разными феодальными силами за овладение армянскими областями и особенно столицей Ани.

В статье дан перевод трех отрывков, изданных Х. Ф. Амедрозом, В. Ф. Минорским и Г. В. Церетели.

آرام ن. دیسریغوندیان

تاریخ میافارقین للفریقی حول شمالی ارمنیا فی القرن الثانی عشر

(ملخص)

ان تاریخ میافارقین لابن الازرق الفریقی المؤرخ العربی المولود فی میافارقین (ولاية اعزديك الارمنية) فی القرن ۱۲، لم ینشرحتى الیوم. تاریخ میافارقین موجود فی مخطوطاتین بالمتحف البریدائی، ولم یتشر منه سوى بعضی المقاطع التي بحثت من قبل ل. آمدروز ومن ثم، مکافار و ف. مینورسکی و ک. تزیریتیلی، و اخیراً ب. عوض. کان الفریقی موجوداً فی العديد من مناطق ارمنیا و جورجیا. ولذا فهو شاهد عيان و معاصر لكثير من الأحداث التي صورها. من الأشیة بمكان تلك المعلومات التي ذكرها عن الأحداث و المعارك التي وقعت فی شمالی ارمنیا فی النصف الثاني عشر بین مختلف القوى الاقطاعية فی الولايات الارمنية، و بالخاص عن الغروب التي خاضوها لاحتلال العاصمة آني. وقد أرفق المقال بتسریجاتی آمدروز و مینورسکی و تزیریتیلی للمخطیة المنشورین.